



Իրական ժամանակի ռեժիմ (աշխատում է վայրկյանի ցուցիչը)

ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս սեղմեք և 2 վայրկյան պահեք RESET ստեղծը: Ուղղեք թարթող տարրը՝ սեղմելով START: Սեղմեք MODE, որպեսզի ընտրեք այլ տարրեր: START ստեղծը սեղմած պահելը փոփոխում է թիվը բարձր արագությամբ: Կարգավորման ավարտից հետո սեղմեք RESET՝ իրական ժամանակի ռեժիմ վերադառնալու համար:

12-ժամյա (AM/PM) և 24-ժամյա ֆորմատներով ցուցադրման միջև ընտրելու համար սեղմեք START իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս:

ԶԱՐԹՈՒՑԻՉ

Իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս 1 անգամ սեղմեք MODE, որպեսզի գործարկվի զարթուցիչի ռեժիմը ("AL"):

Զարթուցիչի ժամանակի կարգավորման համար սեղմեք և 2 վայրկյան պահեք RESET ստեղծը: Ուղղեք թարթող տարրը՝ սեղմելով START: Սեղմեք MODE՝ այլ տարրեր ընտրելու համար: START ստեղծը սեղմած պահելը փոփոխում է թիվը բարձր արագությամբ: Զարթուցիչի կարգավորման ավարտից հետո սեղմեք RESET՝ հաստատելու համար:

Կարևոր է. Զարթուցիչի ձայնային ազդանշանի հնչելու համար, դրա ժամանակը կարգավորելուց բացի, անհրաժեշտ է, որ այն միացած լինի: Զարթուցիչի

ռեժիմում գտնվելիս RESET սեղմելով՝ կառավարեք **զարթուցիչի** (●) և **կրկնելու (snooze) (SNZ)** ֆունկցիաների միացումը/անջատումը:

Չարթուցիչի ձայնային ազդանշանի հնչելիս սեղմեք RESET այն անջատելու համար: Եթե միացած է եղել կրկնելու ֆունկցիան (թարթում է **SNZ**), զարթուցիչի ձայնային ազդանշանը կրկին կհնչի 5 րոպե անց: Կրկնելու ֆունկցիան անջատեք վերևում նկարագրած եղանակով:

Կարևոր է. Եթե զարթուցիչի համար կարգավորված է նաև ամսաթիվ (վերևի աջ անկյունում, «ամիս - օր» ֆորմատով), ապա ձայնային ազդանշանը կհնչի միայն այդ ամսաթվի օրը: Չետևաբար, որպեսզի զարթուցիչի ձայնային ազդանշանը հնչի կարգավորած ժամին ու րոպեին՝ անկախ օրվանից, ամսաթիվը թողեք դատարկ (ուղղելով դարձրեք այն «----»):

ՎԱՅՐԿԵՆԱԶԱՓ

Իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս 2 անգամ սեղմեք MODE, որպեսզի գործարկվի վայրկենաչափի ռեժիմը:

Սեղմեք START վայրկենաչափի միացման/անջատման համար: Սեղմեք RESET վայրկենաչափը զրոյացնելու համար:

ԵՐԿՐՈՐԴ ԺԱՄԱՆԱԿ

Իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս 3 անգամ սեղմեք MODE, որպեսզի գործարկվի երկրորդ ժամանակի ռեժիմը: Երկրորդ ժամանակը կարգավորելու համար սեղմեք և 2 վայրկյան պահեք RESET ստեղծը: Ուղղեք ժամը՝ սեղմելով START: Սեղմեք MODE՝ րոպեն ընտրելու, և START՝ այն ուղղելու համար: START ստեղծը սեղմած պահելը փոփոխում է թիվը բարձր արագությամբ: Սեղմեք RESET՝ երկրորդ ժամանակը հաստատելու համար:

ԹԱՅՄԵՐ (ԱՋԴԱՆՇԱՆՈՂ ՅԵՏՅԱՇՎԱՐԿ)

Իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս 4 անգամ սեղմեք MODE, որպեսզի գործարկվի թայմերի ռեժիմը ("TR"):

Թայմերի կարգավորման համար սեղմեք և 2 վայրկյան պահեք RESET ստեղծը: Ուղղեք ժամը՝ սեղմելով START: Սեղմեք MODE՝ թույլ տալու, և START՝ այն ուղղելու համար: START ստեղծը սեղմած պահելը փոփոխում է թիվը բարձր արագությամբ: Սեղմեք RESET՝ թայմերի կարգավորումը հաստատելու համար:

Թայմերի հետհաշվարկի մեկնարկի համար սեղմեք START: Հետհաշվարկը կշարունակվի, անգամ երբ ժամացույցը թայմերի ռեժիմից դուրս է:

Երբ հետհաշվարկը հասնի զրոյի, կհնչի ձայնային ազդանշան: Սեղմեք RESET այն անջատելու համար:

ԱՄԵՆԺԱՄՅԱ ԱՋԴԱՆՇԱՆ

Ամենժամյա ազդանշանի ֆունկցիան միացնելու/անջատելու համար, զարթուցիչի ռեժիմում գտնվելիս ("AL"), սեղմեք START, այնուհետև RESET: Ցուցադրվում է **SIG**, երբ այս ֆունկցիան միացած է: